

Իսկականի վրայ Նորին Կայսերական Մեծութեան սեպ-
հական ձեռքով ստորագրուած է ՆիկոլԱՅ

Այսպիսով Ռուսիայի բազմացեղ ազգութիւնների վերայ
սուրբ պարտականութիւնն է դրուած, արժանաւոր մարդիկ
ընտրելով, արդարացնելով Կայսերական Դահից արտայայտուած
վատահութիւնը իրենց վերայ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Մեր աշխատակից պ. Գարեգին Ենգիբարեանցը ինդրել
էր պատշաճաւոր իշխանութիւնից թոյլ տալ իրան հրատարա-
կել Բագու քաղաքում հայերէն լեզուով մի ամենօրեայ թերթ
«Երկիր» անունով: Հաւաստի աղբիւրից մենք իմացանք, որ
թոյլ է արուած արդէն այդ թերթի հրատարակութիւնը:

— Թաղաքիս հայ բանտարկեաները խնդրել են մեզ լորգոր
կարդալ հայ խմբագրութիւններին և հրատարակիչներին՝ ու-
զարկել իրանց լրագիրներ և գրքեր՝ միայնութեան ժամանակ
օգտակար գործով զբաղուելու համար: Բարի ցանկութիւնն էր
և մենք կարգադրեցինք արդէն ուղարկել նոցա «Հուման», լու-
սալով, որ ուրիշներն էլ կյարգեն մեր գժրադդ հայրենակիցնե-
րի հրաւերը:

— Անցեաները ուուա լրագիրներում կարգացինք նահանգա-
պետի մի գեղեցիկ կարգադրութիւնն, որ այսուհետև աշխատենք
դիւնական աւելորդ գրագրութիւնները կրնատել և առհասա-
րակ խոյս տալ «պատիւ ունիս խոնարհաբար յայտնել կամ խնդրել» և այլ հնացած ձևերից և բաւականանալ հասարակ ձևե-
րով և դիմումներով: Արդարեւ ժամանակն է, որ մեր մէջ էլ
վերջ տրուին այդպիսի աւելորդ ձևականութիւնները, որոն-
ցով խճողուած է առհասարակ հայ դիւնատունների գրա-
գրութիւնները. և ցանկալի է, որ ամենապարզ և դիւրին ձևեր
սահմանուեն յարաբերութիւնների համար. մանաւանդ անհրա-
ժեշտ է բոլորովին վերացնել ծննդականների վերաբերեալ եր-
կար ու բարակ «Պականդները», «Ժունալները» ևն և այնպէս
կարգադրել, որ 1—2 օրում ժողովուրդը հնար ունենայ ծնն-
դական ստանալ, փոխանակ այժմեան 10—20 օրերի:

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄՐՑԱԳՐՈՒԹԵԱՆ

I.

«Հումայիդ» էջերում քանիցս երևեցաւ նկատողութիւն,
որ մինչև այժմ «Մշակի» խմբագրութիւնը հրապարակական

Հաշիւ չէ տուել զանազան նպատակներով հանգանակած դրամ-ների, որոնց թւում նաև Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկերութեան գոյքի և դրամների համար, այն ընկերութեան, որի ղեկավարն էր «Մշակի» խմբագիր պ. Ա. Քալանթարեան-ը: Ես, որպէս անդամ յիշեալ փակուած ընկերութեան, նոյն-պէս ոչ մի գողափար չունիմ, թէ ինչքան գոյք և դրամ պիտի ունենար ընկերութիւնը փակման րոպէին ու ինչքան յանձ-նուեցաւ երևանի թեմական դպրանոցին: Ճշտիւ մինքան յանձ-նուեց, ինչքան որ պիտի լինէր, թէ աւելի կամ պակաս: Առ-այժմ հաւատ չընծայելով չար լեզուներին, ինդիրը զնում ենք հրապարակի վրայ և առաջարկում պ. Ա. Քալանթարեանոցին՝ պարզել լրագրութեան միջոցով այս գորդեան հանգոյցը:

ԱՆԴԱՄ ՆԱԽԿԻՆ ՀՐԱՏ. ԸՆԿ.

II.

Հայր խմբագիր

Խնդրում եմ թոյլ տաք Լուսայի միջոցով աշխարհ հանել լիքերալ բանակի տգեղ վարմունքներից մէկը:

1903 թ. ամառն էր:

Հայ ժողովուրդը, որ դարերով յարգել—սիրել է իր եկեղեցին, ողբում էր այդ եկեղեցու զրկանքները և զժգոնների խմբերը շտապում էին դէպ իրենց սրբազան տաճարները բողոքելու այն զրկանքների ու վիրաւորանքի դէմ, որ ուղղուած էր դէպի այդ եկեղեցին: Եւ այս արհաւեհքների, ողբ ու լացի մէջ կար մի անտարբեր լեզէն, որի անդամները պատիւ ունին կոչուելու մշակական: Այդ լեզէնի պատգամախօսը բողոքում էր ժողովրդի դէմ և բարձրաձայն գոչում. «ով Արծրունու գերեզմանը սիրում է, նա չը պէտք է բողոքի»: Մէկ խօսքով, այս մարդիկ մկան ծակը մտան և ոչինչ չը ցանեցին:

1905 թ. ամառն էր:

Երկու արուայ ողբ ու լացին, բանտարկութիւններին, սպանութիւններին, նահատակութիւններին և շահատակութիւններին հետևեց Օգոստոս 1-ի բարձրագոյն աւետարեր Հրովարտակը, որով յետ են արուամ մեր եկեղեցական կալուածներն ու դպրոցները:

Ահա գործելու ասպարէզ, ահա ձեզ մի իրաւունք, որով առաջնորդուելով՝ ոչ բանտ, ոչ մահ և ոչ էլ թշուառութիւն չի համարիլ ձեզ:

Այսաեղ ամենքը քաջ են, որովհետեւ իրաւունք ունին գործելու:

Բացուեցաւ մկան ծակի դուռը և դուրս պրծան «Մշակչի հերոսները, Նրանք մոռացել էին Արծրունու գերեզմանը՝ էլ Քալանթար, էլ Առաքելեան և ընկ. շտապեցին դէպի Հայոց Առաջնորդարան և կազմեցին յանձնաժողովներ, մասնաժողովներ, գուցէ և... վեհաժողովներ, և առանց կարմրելու իրենք իրենց անդամ ընտրեցին:

Մախլաս, չը ցանածը կարելի է հնձել...

ՀԱՅԿ ՏԵՐ-ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆՑ

III.

Ա. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՒՑԻՑ

Մշակի 121 համարում տպուած էր որ հանգուցեալ կարսպետ Եղեանը առանց կտակի թողել է մօտ 200000 ռուբլի իւր աղքականներին և ցանկութիւն էր յայտնուած որ հանգուցեալի ժառանգները այդ գումարից մի որոշ տոկոս յատկացնէին մի որևէ բարեգործական հիմնարկութեան: Մենք ճեռնհաս ենք ստոյգն հաղորդելու, որ հանգուցեալ Եղեանը կտակ ունի արած, և նորակարողութիւնը հազիւ 100,000 ի հասնի: Այդ գումարից մօտ 40,000 ռուբլի Դվինսկ-Վիտէրսկ երկաթուղու բաժնետոմսերով, կտակել է Սանասարեան վարժարանին, որը կստանայ այդ գումարը հանգուցեալի Եղբայր բժշկապետ Յօվհաննէս Եղեանի մահից յետոյ: Կտակի մէջ ասուած է, որ եթէ երբեմիցէ դպրոցը դադարէ գոյութիւն ունենալուց, այդ դէպրում դրամագլուխը պիտի յանձնուի ամենայն հայոց կաթուղիկոսի տրամադրութեան: Հանգուցեալի հարուստ մատենագարանը, որ պարունակում է իւր մէջ հայագիտութեան և հայրենագիտութեան վերաբերեալ ամեն տեսակ և երսպական ամեն լեզուներով երկասիրութիւնք, ըստ ցանկութեան հանգուցելոյն՝ մի մասը պիտի յանձնուի Սանասարեան վարժարանին, իսկ միւս մասը Ս. Էջմիածնի Ճեմարանին:

ՍՏ. ԳԱՅԻՐԻԿԵԼԵԱՆՑ

Պետերբուրգ 1905 յուլիս

IV

Յարգելի խմբագիր «Հումայ» ամսագրի

«Մատնիչ», «մատնել» բառը յարաբերական իմաստ ունեցող մի խօսք է: Եւ որովհետև այժմ այդ խօսքը շատ է կրկնում մեր կեանքում, ցանկալի էր իսանալ Զեր կարծիքը, թէ խսկապէս մրապիսի դէպքերի, կամ վարմունքների անունն է մատնութիւն:

Օրինակ «Մշակ» լրագրում յիշուած է թէ «Մեղու Հայաստանի»-ի ընթերցողները կամ «Մեղուականութիւնը» վաղուց ի վեր «Մշակին» մատնիչ է կոչել: Տարակուսական բան. ի՞նչպէս կարող է մի թերթ մատնիչ լինել:

Խնդրում եմ Ձեր ամսագրում բացատրէք ինձ և առհասարակ «Հումայի» ընթերցողների համար, թէ մրապիսի վարմունքների համար տեղին է «մատնել» խօսքը և ում համար է սազական «մատնիչ» մականունը: Խնդրեմ բացատրել նաև, թէ ինչու «Մեղուն» «Մշակին» մատնիչ է անուանել և թէ ի՞նչպէս կարող է թերթը մատնել:

Յարգանոք՝ Աշակերտ Ե. դասարանի

Շատ ուրախ ենք, որ մի պատանու կենդանի հետաքրքրութիւնը կանգ է առել այսպիսի մի փափուկ հարցի վերայ: «Լումայի» յաջորդ համարում մեր աշխատակիցներից մէկը, աշակերտական դասին հասկանալի ոճով կորոշէ «մատնել» և «մատնիչ» բառերի իմաստը և ցոյց կտայ թէ որտեղ պէտք է գործածել արժանապէս այդ բառը:

ԽՄԲ.